https://doi.org/10.46991/S&L/2023.95.005

ԻՐԱՎԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

Հասմիկ Լեյլոյան
ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի ասպիրանտ,
«ՄՍՍ Հայաստան» ՓԲԸ Տեղանքի տեղակայման պայմանագրերի կառավարման մասնագետ

Օբյեկտիվ իրականության տարբեր առումների բազմազանությունը և առանձնահատկությունները բացահայտվում են ոչ միայն գոյություն ունեցող իրողությունների զարգացման գործընթացներում, այլև այն երևույթների մեջ, որոնք կարող են կամ պետք է անհրաժեշտաբար վրա հասնեն: Այս առումով իրականության մաս կազմող իրավունքը կամ իրավական իրականությունը բացառություն չէ, քանի որ այն կարծրացած և միատեսակ չէ: Իրավական իրականությունը կրում է բոլոր այն նախադրյալները և հնարավորությունները, որոնք համապատասխան պայմանների առկայության պարագայում դրսևորվում են և կոչվում են կյանքի:

Հնարավորություններն իրավունքում, ինչպես դիպուկ նկատում է Ա.Վ. Վիսսարովը, կազմում են իրավունքի բովանդակությունը և իրավական երևույթներ են[2]: Միաժամանակ, իրավական հնարավորությունները բազմազան և բարդ երևույթներ են, որոնք այս կամ այն կերպ փոխկապակցված են, փոխլրացնում են միմյանց և ինչ-որ չափով ազդում են միմյանց վրա: Իրավական հնարավորությունների բազմազանությունը պայմանավորված է իրավական երևույթներ ստեղծելու գործընթացի տրոհմամբ՝ իրավաստեղծագործության, իրավունքի զարգացման և իրավունքի կենսագործման փուլերի (ներառյալ վերջիններիս տրոհումը փուլերի): Այստեղ հանդիպում են իրավական հնարավորություններ, որոնք գերակշռում են և, հիմնվելով համանման նախադրյալների վրա, ունենում են ընդհանուր հատկանիշներ և բնութագրեր:

Տարբեր իրավական հնարավորությունների դեպքում ընդհանուր հատկանիշների և բնութագրերի առկայությունը թույլ է տալիս դասակարգել իրավական հնարավորություններն ըստ առանձին տեսակների: Մեր համոզմամբ, իրավական հնարավորությունների դասակարգման անհրաժեշտությունը, ինչպես նաև իրավական հնարավորությունների առանձին տեսակների վերլուծությունը կարևոր են մի շարք պատճառներով: Մասնավորապես, վերլուծության ընթացքում դիտարկվում և վեր են հանվում այն իրավական նախադրյալները, որոնք ընկած են իրավական երևույթների և իրողությունների զարգացման օրինաչափությունների հիմքում, և որոնց շնորհիվ հնարավոր է դառնում պարզել իրավունքի և օրենքի արդյունավետ կենսագործման կառուցակարգերը: Միաժամանակ, իրավական հնարավորությունների առանձին տեսակների տարանջատումն ունի գործնական կարևոր նշանակություն մարդու իրավունքների և ազատությունների ապահովման առումով: Իրավակիրառ պրակտիկայում իրավական հնարավորությունների տարբերակման

[1] Սույն հոդվածը զեկուցվել է 2022թ. դեկտեմբերի 8-ի ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական նստաշրջանին:

[2] Տե՛ս **Виссаров А. В.**, Возможность в праве: Классификация // Вопросы теории и истории государства и права. – 2013. – УДК 340.12(470), էջ 78:

խնդիր է դրվում այն ժամանակ, երբ անհրաժեշտ է լինում առաջադրել կյանքի հրատապ խնդիրների լուծման իրավական ուղիներ և/կամ միջոցներ:

Իրավական հնարավորությունների հիմնական տեսակները տարբերակելու և համալիր վերլուծություն անցկացնելու համար հարկ ենք համարում հիմք ընդունել Դ.Ա. Կերիմովի այն մոտեցումը, համաձայն որի՝ իրավական հնարավորությունների վերլուծության ընթացքում անհրաժեշտ է տարանջատել խնդրի հետևյալ առումները. «Այս կամ այն իրավագիտակցության առաջացման հնարավորություն. այս կամ այն իրավական ակտի ստեղծման հնարավորություն. առկա իրավագիտակցության ու իրավական ակտի պրակտիկ կենսագործման համար այս կամ այն ճանապարհի, տարբերակի և/կամ միջոցի հնարավորություն»[1]: Այստեղ, Դ.Ա. Կերիմովը, ըստ էության, մատնանշում է իրավական հնարավորության՝ իրականության կամ իրավունքի զարգացման պրակտիկայի վերածվելու գործընթացը: Քանի որ իրավական հնարավորությունը նա համարում է բացառապես սոցիալական իրականության ներուժ, հետևաբար գիտնականը կարծում է, որ իրավական հնարավորությունն անքակտելիորեն և օրգանապես կապված է սոցիալական իրականության հետ, բնութագրում է տվյալ իրականության վիճակը՝ հաշվի առնելով վերջինիս շարժն ու փոփոխությունները, հանդես է գալիս «միջանկյալ կապ» առկա և ապագա իրականությունների միջև[2]:

Այս ամենը հիմք է տալիս պնդելու, որ իրավական հնարավորությունը նույնպես անփոփոխ չէ, այն զարգանում է սոցիալական իրականությանը համահունչ: Միաժամանակ, սոցիալական իրականությունը պարունակում է ոչ միայն իրարից տարբերվող, այլև հակադիր, անհամատեղելի, հակասական իրավական հնարավորություններ, այդ թվում՝ անհրաժեշտ և պատահական, օրինաչափ և ոչ օրինաչափ տարրեր, որոնք, դիալեկտիկայի օրենքների համաձայն, ապահովում են նրա զարգացումը: Ա.Դ. Կերիմովի համոզմամբ՝ իրավունքի գործառույթներից է՝ արտահայտելով անհրաժեշտը և/կամ օրինաչափը՝ սահմանափակել պատահականի ազդեցությունը սոցիալական իրականության օրինաչափ զարգացման վրա:

Կիսելով Դ.Ա. Կերիմովի վերոգրյալ դատողությունը՝ կարող ենք մատնանշել իրավական հնարավորությունների առաջին տարբերակումը՝ անհրաժեշտ և պատահական տեսակները: Այնուհետև, իրավական հնարավորությունների բովանդակության տեսանկյունից, մասնավորպես, իրավական երևույթների ստեղծման և կենսագործման համար համապատասխան նախադրյալների առկայությունից ելնելով՝ անհրաժեշտ է տարբերակել իրական և ձևական իրավական հնարավորություններ: Եվ վերջապես, ըստ իրավական երևույթների ձևավորման և իրականացման աստիճանի կամ, ըստ որոշ տեսաբանների (մասնավորապես Ա.Վ. Վիսսարովի), իրավունքում իրական իրավական հնարավորության զարգացման փուլերի[3] պետք է առանձնացնել ընդհանուր (վերացական), մասնավոր, ինչպես նաև փաստացի իրավական հնարավորությունները:

Իրավունքում իրական հնարավորությունը, ի տարբերություն ձևական հնարավորության, ստեղծվում է համապատասխան պայմանների առկայության պարագայում և պայմանավորված է իրավական նախադրյալների անհրաժեշտությամբ: Նախադրյալների և իրականության միջև անհամապատասխանությունից առաջանում են ձևական իրավական հնարավորությունները: Ձևական հնարավորությունը կտրված է իրականությունից և գոյություն ունի բացառապես մտքում կամ ձևակերպման մեջ, այն դեպքում, երբ իրական հնարավորության գոյությունն օբյեկտիվ է և բխում է իրականության պահանջներից: Այնքանով, որքանով ձևական հնարա-

---

[1] **Керимов Д. А.,** Методология права (предмет, функции, проблемы философии права). 2-е изд. — М., Изд. Аванта+, 2001, էջ 280:
[2] Տե՛ս նույն տեղում, էջ 278:
[3] Տե՛ս **Виссаров А. В.**, նշված աշխատությունը, էջ 83:

վորությունը կրում է միայն ձևական հիմքեր և անտեսում է իրավական կյանքի իրական կապերը և իրավահարաբերությունները, դրա՝ իրականության վերածվելու հավանականությունը աննշան է[1]: Ի հակադրություն վերջինի՝ իրական իրավական հնարավորությունները արդեն իսկ կենսագործված կամ ապագային միտված հնարավորություններ են: Դրանք արտահայտում են իրավունքի զարգացման հաջորդականությունը, իրավական երևույթի ստեղծման և կենսագործման ձևավորման աստիճանը:

Ինչպես տեղին նշում է Դ.Ա. Կերիմովը, իրավական հնարավորությունն իրական է միայն այն դեպքում, երբ այն համապատասխանում է սոցիալական իրականությանը և դրա զարգացման միտումներին[2]: Վերջինիս մոտեցումներին հակառակ՝ գոյություն ունի տեսակետ, համաձայն որի ձևական հնարավորությունը գործնականում համարժեք է անհնարինությանը և անհամապատասխանությանը իրականության մեջ առկա պայմաններին[3]: Տվյալ դիրքորոշումը բացատրվում է նրանով, որ ձևական հնարավորությունը թեև ինչ-որ ձևով կապված է իրականության հետ, բայց և այնպես այդ կապը միակողմանի է և աննշան: Այն ընդհանուր առմամբ փոխկապակցված է ոչ թե իրականության հիմնական միտումների հետ, այլ դրա արտաքին, աննշան և երկրորդական կողմերի/միտումների հետ:

Ընդհանրապես, մեր կարծիքով, ձևական հնարավորություններն իրավունքում առաջանում են կա՛մ անցումային (տրանսֆորմացիոն) հասարակություններում իրենց ոչ բնորոշ իրավական համակարգերի ներդրմանը պարտադրող հանգամանքների պարագայում, կա՛մ իրավական նորմերի ընդունման և/կամ կիրառման ընթացքում՝ պատահական սխալների և սխալ հաշվարկների պատճառով, կա՛մ էլ որոշակի ուժերի կողմից միտումնավոր՝ պատմական զարգացման ընթացքը չարտացոլող գործողությունների կատարման արդյունքում: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների լայն շրջանակը (ՀՀ Սահ., Գլուխ 2) կամ մարդու՝ որպես բարձրագույն արժեքի հռչակումը (ՀՀ Սահ., 3-րդ հոդված, 1-ին կետ), չնայած սահմանադրական ամրագրմանը, կմնան ձևական իրավական հնարավորություններ և չեն կենսագործվի, քանի դեռ ամբողջ ծավալով չեն ստեղծվել այն երաշխիքները, նախադրյալները և համապատասխան պայմանները, որոնք անհրաժեշտ են դրանց կենսագործման համար:

Հարկ է նշել նաև, որ իրավաբանական գրականության մեջ հանդիպում են դեպքեր, երբ «ձևական հնարավորություն» հասկացությունը կիրառվում է մի խումբ սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների մատնանշման համար, որոնք կրում են ոչ թե իրական, այլ ձևական բնույթ, կամ ձևական են անվանվում բոլոր իրավական հնարավորությունները: Նմանօրինակ մոտեցումները, մեր կարծիքով, հիմնավորված չեն: Օրինակ, Ա.Վ. Վիսսարովը այդպիսի մոտեցումները բացատրում է նրանով, որ իրավունքը հասարակական հարաբերությունների նկատմամբ հանդես է գալիս որպես ձև, հետևաբար այն հնարավորությունները, որոնք պարունակում է իրավունքը, ձևական են[4]: Միաժամանակ, Ա.Վ. Վիսսարովը գտնում է, որ ի հակադրություն նման մոտեցմանը՝ հնարավորություն կատեգորիան իրավունքում ավելի տարողունակ և ճիշտ է արտահայտում իրավունքի ու հասարակական հարաբերությունների փոխհարաբերությունները: Մասնավորապես, իրավունքի կենսագործումը հանգեցնում է հասարակական հարաբերությունների հա-

---

[1] Ավելի մանրամասն տե՛ս **Гегель Г. В. Ф.** Сочинения, Т. I., էջ 241:
[2] Տե՛ս **Керимов Д. А.,** նշված աշխատությունը, էջ 281:
[3] Տե՛ս Возможность и действительность / М. А. Парнюк, А. С. Кирилюк и др. – Киев, 1989, էջ 98:
[4] Տե՛ս **Виссаров А. В.**, նշված աշխատությունը, էջ 79:

տուկ խմբի առաջացմանը, այն է՝ իրավահարաբերությունների, որոնք ունեն իրենց բովանդակությունը և միևնույն ժամանակ այլ հարաբերությունների ձև են [1]:

Որոշ տեսաբանների կարծիքով (օրինակ՝ Ն.Ի. Շիշլյաննիկով, Ի.Ի. Գոլովին, Լ.Պ. Դովժենկո, Ս.Ա. Էլիզեևա), ձևական հնարավորությունը «հնարավորություն է, որը փոխկապակցված է պատահականության հետ՝ պայմանավորված իրականության պատահական հարաբերություններով և կողմերով»[2], կամ մեկ այլ տեսակետի համաձայն՝ այն «արտաքին հնարավորություն»[3] է, որը չի հակասում բնության և հասարակության օրենքներին:

Անցում կատարելով ընդհանուր (վերացական), մասնավոր և փաստացի իրավական հնարավորությունների վերլուծությանը՝ նախ նշենք, որ որոշ տեսաբանների մոտեցման համաձայն՝ դրանք իմաստային առումով նույնանում են[4]: Վերջինիս հակառակ տեսակետն են պաշտպանում Դ.Ա. Կերիմովը և Ա.Վ. Վիսսարովը:[5] Սակայն, մենք կարծում ենք, որ յուրաքանչյուր ընդհանուր (վերացական) իրավական հնարավորություն օժտված է իրականության որոշակի չափաբաժինով, քանի դեռ յուրաքանչյուր իրական իրավական հնարավորություն չի վերածվել իրականության: Այս տեսանկյունից իրական իրավական հնարավորությունը ինչ-որ իմաստով նույնպես ընդհանուր (վերացական) է: Սա բացատրվում է իրական իրավական հնարավորության զարգացման աստիճանով: Ընդհանուր (վերացական) իրավական հնարավորության պարագայում անհրաժեշտ իրավական նախադրյալների ծավալը չի բավարարում, որ այն վերածվի իրականության, մինչդեռ իրական իրավական հնարավորության դեպքում դրա համար առկա են բոլոր անհրաժեշտ իրավական նախադրյալները:

Ընդհանուր (վերացական) իրավական հնարավորությունը անհրաժեշտ իրավական նախադրյալների և իրականության վերածվելու համապատասխան պայմանների ստեղծման հետ փոխակերպվում է մասնավոր իրավական հնարավորության: Այսպիսով, ստացվում է, որ իրավական իրականության «հասունացման» շնորհիվ ընդհանուր (վերացական) իրավական հնարավորությունը նախ փոխակերպվում է մասնավոր իրավական հնարավորության, որը, վերածվելով իրականության, փաստացի կենսագործվում է և իր հերթին փոխում է իրավական իրականությունը:

Իրավաբան տեսաբանների մոտ հանդիպում է նաև, այսպես կոչված, «փաստացի հնարավորություն» հասկացությունը[6], որը պետք է հասկանալ որպես իրավական երևույթների իրականացման վերջին աստիճան:

Վերը նկարագրված կառուցակարգը, որում ընդհանուր (վերացական) իրավական հնարավորությունը փոխակերպվում է մասնավոր իրավական հնարավորության, այնուհետև վերածվում է իրականության, հնարավոր է պատկերավոր տարածել սույն հոդվածի շրջանակներում վերը վկայակոչված ՀՀ Սահմանադրության հոդվածների վրա: Մասնավորապես, կարող ենք համաձայնել, որ տվյալ, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության մի շարք այլ հոդվածներում տեղ գտած նորմերը կրում են ընդհանուր (վերացական) իրավական հնարավորության բնույթ: Այն պահից, երբ

---

[1] Տե՛ս նույն տեղում:

[2] Տե՛ս **Шишлянников Н. И.,** Категории и законы диалектики. – Волгоград, 1969, էջ 91, **Головин И. И., Довженко Л. П., Елисеева С. А.** Категории материалистической диалектики. – М., 1968, էջ 15–16:

[3] Տե՛ս **Фурман А. Е.,** Материалистическая диалектика. Основные категории и законы. – М.: Издво Моск. ун-та, 1969, էջ 15–16:

[4] Տե՛ս **Матузов Н. И.,** Возможность и действительность в правовой сфере // Правоведение. – 2000. – № 3., էջ 16-30:

[5] Տե՛ս **Керимов Д. А.,** նշված աշխատությունը, էջ 281-283: **Виссаров А. В.**, նշված աշխատությունը, էջ 83-85:

[6] Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս **Зорькин В. Д.** Современный мир, право и Конституция. – М.: Норма, 2010.

սահմանադրաիրավական նորմերը և/կամ սկզբունքները կիստակեցվեն մասնավոր իրավական հնարավորությունների տեսքով, այն է՝ կսահմանվեն օրենքներ այնպիսի ձևակերպումներով, որոնք կարող են կյանքի կոչվել, ընդհանուր (վերացական) իրավական հնարավորության բնույթ ունեցող նորմերը և/կամ սկզբունքները իրավական իրականության մեջ կկենսագործվեն: Այս կապակցությամբ պետք է արձանագրենք, որ իրավագիտական գրականության մեջ բազմիցս է ընդգծվել սահմանադրական դրույթների անիրագործելիությունը՝ առանց պատշաճ օրենքների սահմանման[1]: Վերոգրյալի շրջանակներում չենք կարող չհամաձայնել տեսաբան Օ.Է. Լեյստի հետ, որը կարծում է, որ իրավական համակարգում իրավունքի ընդհանուր (վերացական) և մասնավոր հնարավորությունների հարաբերակցության մեջ միշտ առկա է խնդիր[2]:

Ինչ վերաբերվում է անհրաժեշտ և պատահական իրավական հնարավորություններին, ապա պետք ասել, որ ոչ բոլոր իրական ու մասնավոր իրավական հնարավորություններն են անհրաժեշտ[3]: Հարկավոր է այն իրավական հնարավորությունը, որը արտացոլում է սոցիալական իրականության զարգացման օրինաչափ միտումները: Փաստորեն, իրավունքի գործողության արդյունավետությունը պայմանավորված է իրավունքում անհրաժեշտ հնարավորության իրացման աստիճանով: Սրան հակառակ՝ պատահական իրավական հնարավորությունը հակասում է իրավական պրակտիկայի օրինաչափ բնականոն զարգացմանը և ընթացիկ պահանջմունքներին. այն պատահական հանգամանքների առաջացման արդյունք է:

Այսպիսով, կատարված վերլուծության հիման վրա կարող ենք եզրակացնել հետևյալը.

1. Իրավական հնարավորությունները բազմազան և բարդ երևույթներ են, որոնք փոփոխվում և զարգանում են սոցիալական իրականությանը համահունչ:

2. Տարբեր իրավական հնարավորությունների դեպքում ընդհանուր հատկանիշների և բնութագրերի առկայությունը թույլ է տալիս դասակարգել իրավական հնարավորությունները հետևյալ հիմնական տեսակների՝ անհրաժեշտ և պատահական, իրական և ձևական, ընդհանուր (վերացական) և մասնավոր, ինչպես նաև՝ փաստացի:

3. Իրավական հնարավորությունն իրական է միայն այն դեպքում, երբ այն համապատասխանում է սոցիալական իրականությանը, դրա զարգացման միտումներին, ստեղծվում է համապատասխան պայմանների առկայության պարագայում և պայմանավորված է իրավական նախադրյալների անհրաժեշտությամբ: Նախադրյալների և իրականության միջև անհամապատասխանությունից ծագում են ձևական իրավական հնարավորությունները, որոնք կտրված են իրականությունից և գոյություն ունեն բացառապես մտքում կամ ձևակերպման մեջ:

4. Իրավական ակտերում սահմանված իրավունքները կմնան ձևական իրավական հնարավորություններ և չեն կենսագործվի, քանի դեռ ամբողջ ծավալով չեն ստեղծվել այն երաշխիքները, նախադրյալները և համապատասխան պայմանները, որոնք անհրաժեշտ են դրանց կենսագործման համար:

5. Ընդհանուր (վերացական) իրավական հնարավորությունը, ըստ էության, իրական իրավական հնարավորության զարգացման աստիճան է, որի դեպքում անհրաժեշտ իրավական նախադրյալների ծավալը բավարար չէ իրականության վերածվելու համար: Բացակայող իրավական նախադրյալների և համապատասխան պայմանների ստեղծմանը զուգահեռ՝ ընդհանուր (վերացական) իրավական հնա-

---

[1] Տե՛ս **Виссаров А. В.**, նշված աշխատությունը, էջ 79:

[2] Տե՛ս **Лейст О. Э.** Сущность права. Проблема теории и философии права: учеб. пособие. – М.: Зерцало-М, 2011, էջ 87:

[3] Տե՛ս **Керимов Д. А.,** նշված աշխատությունը, էջ 283:

րավորությունը փոխակերպվում է մասնավոր իրավական հնարավորության, որը, վերածվելով իրականության, կենսագործվում է:

6. Անհրաժեշտ է այն իրավական հնարավորությունը, որը արտացոլում է սոցիալական իրականության և իրավական պրակտիկայի զարգացման օրինաչափ միտումները: Պատահական է այն իրավական հնարավորությունը, որը հակասում է այդ միտումներին:

7. Իրավական հնարավորությունների դասակարգումը և դրանց տեսակների վերլուծությունն ունեն մեթոդաբանական կարևոր նշանակություն իրավունքի փիլիսոփայության և իրավական պրակտիկայի փոխհարաբերության էությունը խորապես ըմբռնելու համար: Վերլուծության ընթացքում հստակ մատնանշվում է տեսականի՝ որպես հնարավորության և փորձնականի՝ որպես իրականության վերածման գործընթացը, ինչպես նաև քննարկվում է կառավարել այդ գործընթացը համապատասխան հասարակական հարաբերություններում՝ առավել արդյունավետ իրավակարգավորման կառուցակարգեր ներդնելու եղանակով:

ВИДЫ ПРАВОВЫХ ВОЗМОЖНОСТЕЙ И ИХ ОСОБЕННОСТИ

Асмик Лейлоян
Аспирант кафедры теории и истории государства и права юридического факультета ЕГУ

Необходимость анализа основных видов правовых возможностей имеет важное методологическое значение по ряду причин. В частности, в ходе анализа рассматриваются и выделяются правовые предпосылки, лежащие в основе закономерностей развития правовых явлений и реалий, благодаря которым становится возможным понимание структуры реализации права. Кроме того, выделение отдельных видов правовых возможностей имеет важное практическое значение для обеспечения основных прав и свобод человека. В статье автор, опираясь на общие черты и признаки разных возможностей в праве, классифицируют правовые возможности на следующие основные виды: реальные и формальные, общие (абстрактные), конкретные и фактические, необходимые и случайные правовые возможности.

Перечисленные правовые возможности автор рассматривает в аспектах тесного соотношения философия права и юридической практики (реализации права), а также предает особое значение проблеме соотношения общей (абстрактной) и конкретной возможности в праве, на примере конституционных норм законодательство РА.

Согласно представленному в статье заключению, глубокий анализ основных видов правовых возможностей, позволяет управлять процессом превращения теоретического как возможного в практическое как действительное, путем оптимального и наиболее эффективного правового регулирования соответствующие общественные отношения.

TYPES OF LEGAL POSSIBILITIES AND THEIR FEATURES

Hasmik Leyloyan
Post-Graduate Student at the YSU Chair of Theory and History of State and Law

The need to analyze the main types of legal possibilities is of great methodological importance for a number of reasons. In particular, in the process of the analysis, the legal prerequisites that underlie the patterns of development of legal phenomena and realities are considered and highlighted, thanks to which it becomes possible to understand the structure of the realization of law. In addition, the allocation of certain types of legal possibilities is of great practical importance for ensuring fundamental human rights and freedoms. In the article, the author, based on common features and signs of different possibilities in law, classifies legal possibilities into the following main types: real and formal, general (abstract), specific and actual, necessary and random legal possibilities.

The author considers the listed legal possibilities in terms of the close relationship between the philosophy of law and legal practice (realization of law), and also pays special attention to the problem of the correlation of the general (abstract) and specific possibilities in law, using the example of the constitutional norms of the legislation of the Republic of Armenia.

According to the conclusion presented in the article, a deep analysis of the main types of legal possibilities makes it possible to manage the process of turning the theoretical as possibilty into practical as reality, with a way of the optimal and most effective legal regulation of the relevant social relations.

Բանալի բառեր – *իրավունք, իրավական հնարավորություն, իրական և ձևական, ընդհանուր (վերացական), մասնավոր և փաստացի, անհրաժեշտ և պատահական իրավական հնարավորություն, իրավական իրականություն, սոցիալական իրականություն, իրավական երևույթ, իրավունքի կենսագործում, իրավունքի փիլիսոփայություն*

Ключевые слова: *право, правовая возможность, реальная и формальная, общая (абстрактная), конкретная и фактическая, необходимая и случайная правовая возможность, правовая действительность, социальная действительность, правовое явление, реализация права, философия права*

Key words: *Law, legal possibility, real and formal, general (abstract), specific and actual, necessary and random possibilities in law, legal reality, social reality, legal phenomenon, realization of law, philosophy of law*